

© 2019 Հաշվետվությունը հրապարակվել է
«Խաղաղության երկխոսություն»
հասարակական կազմակերպության կողմից

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ, հասցե՝
Հայաստանի Հանրապետություն, 2002,
ք. Վանաձոր; Մյասնիկյան 12, բն. 40, «ԽԵ»
գրասենյակ;

Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632

Էլ. փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am

URL: http://www.peacedialogue.am;
http://www.safesoldiers.am

Խաղաղության երկխոսություն





Տարեկան հաշվետվություն

2017 - 2018

«Խաղաղության երկխոսություն»
հասարակական կազմակերպություն

Խաղաղության երկխոսություն



«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2017-2018ԹԹ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Խաղաղության երկխոսություն

© 2019 Հաշվետվությունը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ, հասցե՝
Հայաստանի Հանրապետություն, 2002,
ք. Վանաձոր; Մյասնիկյան 12, բն. 40, «ԽԵ» գրասենյակ;

Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632

Էլ. փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am

URL: http://www.peacedialogue.am;
http://www.safesoldiers.am

Խմբագրական կազմ՝

Էդգար Խաչատրյան,
Վահագն Անտոնյան,
Ռուզաննա Աբովյան

Բովանդակություն

ՏԱՍՆԱՄՅԱ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ
ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ 4

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 6

Կազմակերպության տեսլականը, առաքելությունը
եւ ռազմավարական նպատակները 7

Պատվավոր անդամներ 8

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ»
ՀԿ-Ի 2017-2018ԹԹ. ԾՐԱԳՐԵՐԸ 10

«Նախազորակոչային տարիքի երիտասարդների իրազեկում
ԶՈւ-ում մարդու իրավունքների թեմայի շուրջ» 11

«Քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը
ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների
պաշտպանության եւ խթանման գործում» 12

Աջակցություն ոչ մարտական պայմաններում
մահացած զինծառայողների ընտանիքներին 14

«Արենա. համայնքային թատրոն եւ հանրային արվեստ» 16

«Վերանայել, համագործակցել, կիսվել» 18

EPNK -3 18

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2017 ԵՒ 2018 ԹԹ.-Ի ՀԱՄԱՐ 19

«ԽԵ» ֆինանսական վիճակը 2017թ.-ի կտրվածքով 20

«ԽԵ» ֆինանսական վիճակը 2018թ.-ի կտրվածքով 21

ՀԵՏԱԳԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ 2019-2021 22

Ռազմավարական նպատակներ՝ 2019-2021 թթ.-ի համար 23

Տասնամյա երկխոսություն հանուն արդարության եւ խաղաղության

Էդգար Խաչատրյան,
«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության նախագահ

Հարգելի գործընկերներ, բարեկամներ, շահառուներ եւ աջակիցներ, ուրախությամբ հայտնում ենք, որ 2019 թվականի հունվարի 10-ին լրացավ «Խաղաղության երկխոսություն» (ԽԵ) հասարակական կազմակերպության գործունեության տասներորդ տարեդարձը:

Հիմնադրումից ի վեր, այս 10 տարիների ընթացքում, կազմակերպությունը բազմաթիվ տեղական, տարածաշրջանային եւ միջազգային կարեւորություն ունեցող ծրագրեր ու նախաձեռնություններ է իրականացրել մարդու իրավունքների եւ ժողովրդավարության, հակամարտությունների խաղաղ կարգավորման եւ քաղաքացիական կրթության ոլորտներում: Մեր տեղական եւ միջազգային գործընկերների հետ համատեղ՝ հարյուրավոր աշխատանքային հանդիպումների, դասընթացների, հանրային ակցիաների եւ հետազոտությունների միջոցով ջանքեր ենք գործադրել Հայաստանում եւ Արեւելյան գործընկերության տարածաշրջանի հակամարտություններում ներգրավված այլ երկրներում խաղաղության մշակույթի ու ժողովրդավարական արժեքների ձեւավորման եւ մարդու իրավունքների պաշտպանության նպատակով:
Չնայած վերջին տարիների ընթացքում տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումների լարված ընթացքին՝ ԽԵ-ի թիմը գործընկերների հետ համատեղ շարունակել է իր գործունեությունն՝ ուղղված իրավապաշտպանության եւ խաղաղաշինության բնագավառներում Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ուկրաինայի եւ Ռուսաստանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կարողությունների զարգացմանը: ԽԵ-ի շահառու են դարձել հազարավոր մարդիկ, տասնյակ հասարակական կազմակերպություններ եւ ակտիվիստական խմբեր ստացել են դրամական եւ տեխնիկական



օժանդակություն, հարյուրավոր քաղաքացիների տրամադրվել է իրավական աջակցություն, հազարավոր մարդիկ մասնակցել են կազմակերպության կողմից իրականացված տեղական, տարածաշրջանային եւ միջազգային ծրագրերին, միջոցառումներին եւ դասընթացներին:

2018-ի գարնանը Հայաստանը թեւակոխեց պատմական մի նոր փուլ: Ապրիլյան «Թավշյա հեղափոխությամբ» վերջ դրվեց երկրում տարիներ շարունակ ամրապնդվող հիասթափությանը, հուսահատությանը, անտարբերությանը եւ վախի մթնոլորտին: Հպարտ էինք, երբ գիտակցեցինք, որ մայրաքաղաքի եւ հանրապետության տարբեր քաղաքների «փողոցները փակող երիտասարդների» շարքերում հայտնվել են նաեւ նրանք, ովքեր տարիներ շարունակ մասնակցել եւ մասնակցում են ԽԵ-ի կողմից իրականացվող ծրագրերին եւ դասընթացներին: Այս փաստը հույս ներշնչեց, որ մեր գործունեությամբ կարողացել ենք, թեկուզ եւ աննշան, ներդրում ունենալ հատկապես երիտասարդ քաղաքացիների մոտ ժողովրդավարական արժեքների նկատմամբ հարգանքի եւ ազատատենչության, պահանջատիրության զգացման ձեւավորման գործում: «Թավշյա հեղափոխությունն» ապացուցեց նաեւ տարիներ շարունակ կազմակերպության դավանած պայքարի ոչ բռնի միջոցների արդյունավետությունը: Այս հեղափոխությունը վկայությունն էր փաստի, որ անգամ ամենաբարդ եւ առաջին հայացքից լուծում չունեցող հակամարտությունը կարելի է լուծել խաղաղ ճանապարով՝ առանց բռնության եւ մարդկային կորուստների:

Այս հրապարակումով ձեր դատին ենք հանձնում «Խաղաղության երկխոսություն» հկ-ի երկամյա հաշվետվությունը՝ 2017-2018 թվականների համար: Վերջին երկու տարիների ընթացքում կազմակերպության ուշադրության կենտրոնում են եղել հայկական զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության եւ հետսովետական տարածաշրջանում իրավապաշտպանական եւ խաղաղաշինական ներուժի ձեւավորմանն առնչվող խնդիրներ: 2017-2018թթ.-ի ընթացքում ԽԵ-ն իրականացրել է մի շարք ծրագրեր, որոնք նպատակ ունեին նվազեցնել ՀՀ զինված ուժերում իրավախախտումների թիվը, բարձրացնել զորակոչիկների շրջանում մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկության մակարդակը եւ ուժեղացնել ԶՈՒ գործունեության նկատմամբ քաղաքացիական հասարակության վերահսկողությունը: Միեւնույն ժամանակ իրականացրել ենք թվով 27 տեղական, տարածաշրջանային եւ միջազգային դասընթացներ եւ աշխատանքային հանդիպումներ, որոնց մասնակցել են քաղաքացիական հասարակության ավելի քան 500 կազմակերպությունների, պետական եւ միջպետական կառույցների ներկայացուցիչներ՝ Հարավային Կովկասի երկրներից, Ուկրաինայից, Ռուսաստանի Դաշնությունից, Գերմանիայից եւ Նիդերլանդներից:

Հարկ է նշել, որ ԽԵ գործունեության արդյունավետության բարձրացման համար իրականացրել ենք մի շարք կառուցվածքային բարեփոխումներ, անցկացրել անձնակազմի կարողությունների զարգացման դասընթացներ, մշակել նաեւ կազմակերպության գործունեության ռազմավարությունը 2019-2021 թթ.-ի համար:

Եւ վերջում՝ կրկին անգամ ցանկանում ենք երախտիքի խոսք ուղղել մեր գործընկերներին եւ աջակիցներին իրենց օժանդակության համար, ինչի շնորհիվ կազմակերպությունը կարողանում է ապահովել իր գործունեության շարունակականությունն ու հետեւողականությունը:

«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության մասին

Տեսլական

Առաքելություն

Ռազմավարական ուղղություններ

Ռազմավարական նպատակներ

2021
2020
2019
2018
2017
2016
2015
2014
2013
2012
2011
2010
2009



Կազմակերպության տեսլականը, առաքելությունը եւ ռազմավարական նպատակները

«Խաղաղության երկխոսությունը» ոչ կրոնական, ոչ քաղաքական, իրավապաշտպան, խաղաղասիրական հասարակական կազմակերպություն է: Հիմնադրվել է 2009թ. Հայաստանում:

Կազմակերպությունը միավորում է Արեւելյան գործընկերության երկրներում, Ռուսաստանի Դաշնությունում եւ Եվրոպայում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործող փորձառու իրավապաշտպաններին ու խաղաղության կառուցման ուղղությամբ գործունեություն ծավալող ակտիվիստներին՝ մարդու իրավունքների պաշտպանության եւ հակամարտությունների խաղաղ կարգավորման նպատակով:

Կազմակերպության տեսլականն է՝ խաղաղ եւ ժողովրդավար հասարակություններում իրավունքի ու օրենքի գերակայություն:

Առաքելություն. հակամարտող եւ հետկոնֆլիկտային հասարակություններում կազմակերպությունն իր տեղական, տարածաշրջանային եւ միջազգային մակարդակներում ծավալած գործունեությամբ ձգտում է նպաստել.

- **բազմաշերտ երկխոսության ձեւավորմանը,**
- **մարդու իրավունքների պաշտպանությանը,**
- **խաղաղասիրական շարժման ու խաղաղության մշակույթի ձեւավորմանը,**
- **ժողովրդավարական արժեքների նկատմամբ հարգանքի ձեւավորմանը,**
- **ժողովրդավարական ինստիտուտների զարգացմանն ու հզորացմանը:**

2017 – 2018 թթ.-ին «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության գործունեությունն ուղղված է եղել.

- պրոակտիվ քաղաքացիական, իրավապաշտպանական, խաղաղասիրական ներուժի զարգացմանը,
- մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանությանը,
- պետական մարմինների կողմից որոշումների կայացման գործընթացների վրա քաղաքացիական վերահսկողության սահմանմանը,
- քաղաքական եւ քաղաքացիական գործընթացներում կանանց եւ տղամարդկանց հավասար մասնակցության հնարավորության ապահովմանը,
- քաղաքացիական, հասարակական, քաղաքական նշանակություն ունեցող նախաձեռնությունների աջակցությանը,
- հետկոնֆլիկտային ու կոնֆլիկտային երկրների հասարակություններում փոխվստահության եւ երկխոսության ձեւավորմանը, ռազմականացման, ազգայնական ու հայրիշխանական միտումների կրճատմանը, դրանց հակակշիռ այլընտրանքների ձեւավորմանը, գենդերային կարծրատիպերի հաղթահարմանն ու գենդերային զգայունության բարձրացմանը,
- հակամարտություններից տուժածների շահերի պաշտպանությանը:

2017-2018 թթ.-ին կազմակերպության գործունեության հիմնական թեմատիկ ոլորտներն են եղել՝

- Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությունը և ժողովրդավարական արժեքների ձեւավորումն ու տարածումը,

- Հակամարտություններում ներգրավված հետխորհրդային երկներում խաղաղության մշակույթի, ժողովրդավարական արժեքների ձևավորումն ու հակամարտությունների փոխակերպումը:

Պատվավոր անդամներ

Ուրախությամբ հայտնում ենք, որ 2018թ.- ին «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության խորհուրդը համալրվել է հինգ նոր անդամով:

Դր. Մարինա Գրասսեն
Բեռլինում գործող ՕՎԵՆ կանանց միության համահիմնադիրն է: Ծնվել է 1950թ.՝ Բեռլինում: 1980-ականների սկզբում ակտիվ մասնակցություն է ունեցել տարբեր անկախ խաղաղասիրական շարժումներում, 1990-ին, մինչ հոկտեմբերի 3-ին ԳԴՀ-ի միանալը ԳՖՀ-ին, կառավարությունում պատասխանատու էր հավասարության հարցերի համար: ԳԴՀ-ում ծավալած իր քաղաքական գործունեության համար պարգեւատրվել է «Մատուցած ծառայությունների համար» խաչի շքանշանով: 2006թ.-ից հետո ՕՎԵՆ-ն իր քաղաքական գործունեությունը փոխարինեց գենդերային եւ խաղաղասիրական կրթական գործունեությամբ: Մարինա Գրասսեն 2009թ.-ից, «Խաղաղության երկխոսության» հիմնադրումից սկսած, կազմակերպությանը մեծապես աջակցողներից մեկն է: Ներկայում ակտիվորեն ներգրավված է ԽԵ եւ Օվեն-ի համատեղ նախագծերում:

Գիդո դե Գրաաֆ Բիրբաուերը 2018թ.-ին է դարձել «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության պատվավոր անդամ, սակայն աջակցել է կազմակերպությանը հիմնադրման օրից: Նիդեռլանդական PAX խաղաղասիրական կազմակերպության աշխատակից է, գլխավորում է Activist Hive ծրագիրը, որն աջակցում է տարբեր երկրներում խաղաղության եւ արդարության ուղղությամբ աշխատող ակտիվիստներին: Մինչ այդ՝ ներգրավված է եղել Հարավային Կովկասում առկա քաղաքացիական խաղաղասիրական գործընթացներում:

Դենիս Մատվեեւը
հակամարտությունների ձեւափոխման եւ երկխոսությունների հարցերով խորհրդական է, ֆասիլիտատոր եւ դասընթացավար: Աշխատել է կառավարությունների, դե ֆակտո կառավարությունների եւ միջկառավարական ու հասարակական կազմակերպությունների հետ՝ Մոլդովայում, Մերձդնեստրում, Հայաստանում, Ադրբեջանում, Լեռնային Ղարաբաղում, Վրաստանում, Աբխազիայում, ՌԴ-ում, Շրի Լանկայում եւ Ռումինիայում: Ներկայում աշխատում է ֆիննական CMI Մարտի Ահտիսաարիի անվան կենտրոնում՝ որպես ավագ խորհրդական: «Խաղաղության երկխոսություն» հկ-ի եւ Դենիս Մատվեեւի համագործակցությունը ձեւավորվել է 2010-ին՝ ԵՄ-ի EPNK ծրագրի շրջանակներում, որում «Խաղաղության երկխոսությունը» ներգրավված էր որպես տեղական գործընկեր, շարունակվել՝ ԽԵ բազմաթիվ նախագծերում նրա ներգրավմամբ:

Սթիվեն Մ. Գրինբերգը
Բրուկլինի Բեթ Սիոն տաճարի գործադիր տնօրենն է: Մինչ այդ Հայաստան է այցելել որպես Խաղաղության կորպուսի կամավոր, աշխատել «Խաղաղության երկխոսությունում»: Քորնելլի եւ Մասսաչուսեթսի համալսարանների շրջանավարտ է:

Լուսինե Պողոսյանը
«Խաղաղության երկխոսությանն» է միացել ութ տարի առաջ, ներգրավված եղել համայնքի հզորացման ծրագրերում: Ոգեշնչված կազմակերպության գաղափարախոսությամբ՝ նա 2015-2017թթ.-ին խաղաղասիրություն ուսանեց իտալական Հռոմում: Այժմ համագործակցում է ԷկոԼաբ հիմնադրամի հետ, համարվում MitOst e.V եւ Ռոբերտ Բոշի հիմնադրամի Թեոդոր-Հեուս-Կոլլեգ ծրագրի միջազգային փորձագետ:

«Խաղաղության երկխոսություն» ԿԿ-ի 2017-2018թթ. ծրագրերը

EPNK-3

«Արենա. համայնքային թատրոն եւ հանրային արվեստ»

N

E

W

S

«Քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության եւ խթանման գործում»

Աջակցություն ոչ մարտական պայմաններում մահացած զինծառայողների ընտանիքներին

«Վերանայել, համա-գործակցել, կիսվել»

«Նախա-զորակոչային տարիքի երիտասարդների իրազեկում ԶՈՒ-ում մարդու իրավունքների թեմայի շուրջ» ծրագիր

Խաղաղության մշակույթի ձեւավորում եւ հակամարտու-թյունների փոխակերպում

Մարդու իրավունքների պաշտպանություն և ժողովրդավարա-կան արժեքների ձեւավորում

«Նախազորակոչային տարիքի երիտասարդների իրազեկում ԶՈՒ-ում մարդու իրավունքների թեմայի շուրջ»

Ծրագրի տեւողությունը՝ 1 տարի
Բյուջե (2017 եւ 2018)՝ 17.351,00 ԱՄՆ դոլար
Դոնոր. Ծրագիրն իրականացվում է Հայաստանում ԱՄՆ դեսպանության Ժողովրդավարության հանձնաժողովի փոքր դրամաշնորհների ծրագրի աջակցությամբ:

«Նախազորակոչային տարիքի երիտասարդների իրազեկում ԶՈՒ-ում մարդու իրավունքների թեմայի շուրջ» ծրագիրը «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունն իրականացրել է 2017-2018թթ.-ին: Ծրագիրն ուղղված է եղել նախազորակոչային տարիքի երիտասարդների իրազեկության մակարդակի բարձրացմանը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ: Ծրագրի շրջանակներում իրավաբանի ներգրավմամբ վերլուծության ենթարկվեց զինված ուժերին վերաբերող ՀՀ օրենսդրությունը, վերհանվեցին ԶՈՒ-ում ամենահաճախ հանդիպող մարդու իրավունքների ոտնահարման դեպքերը: Ուսումնասիրությունների հիման վրա մշակվեց քայլ առ քայլ ուղեցույց նախազորակոչային տարիքի երիտասարդների, ինչպես նաեւ նրանց ընտանիքների անդամների համար: Ուղեցույցի նախապատրաստման աշխատանքներում ներգրավվել են նաեւ Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, պաշտպանության նախարարության ու կրթության եւ գիտության նախարարության մասնագետները:

600 օրինակով լույս տեսած «Մարդու իրավունքները զինված ուժերում» ուղեցույցի տպաքանակի մեծ մասն արդեն տարածվել է աշակերտների շրջանում: Այն հասանելի է նաեւ ԽԵ կայքում. 2018թ.-ի ավարտին ձեռք բերված տվյալների հիման վրա՝ շուրջ 720 օգտատեր արդեն դիտել է նյութը, շուրջ 200-ը՝ տարածել այն:

Բացի այդ, ծրագրի շրջանակներում DASARAN.AM կայքի «Հանրագիտարան» բաժնում ավելացվել է ուղեցույցի նյութերի հիման վրա պատրաստված «Իմ իրավունքները զինված ուժերում» բաժինը, որտեղ դպրոցականները կարող են ծանոթանալ զինվորական ծառայության հետ կապված իրենց իրավունքների, կարգերի, օրենքների հետ, որոնք էջում համակարգված են հանրագիտարանի տրամաբանությամբ:

Նույն կայքի «Ես գիտեմ. բանակ եւ իրավագիտություն» ինտերակտիվ խաղի «Մարդու իրավունքները զինված ուժերում» նորաստեղծ բաժնի հարցերը եւս կազմվել են ԽԵ կողմից մշակված ուղեցույցի հիման վրա: 2018թ.-ի տվյալներով շուրջ 140.000 օգտատեր արդեն խաղացել է խաղը:

«Մարդու իրավունքները զինված ուժերում» քայլ առ քայլ ուղեցույցի շնորհանդեսը կայացավ Ծաղկաձորի Մարիոթ հյուրանոցում՝ 2018թ.-ի նոյեմբերի 30-ին: Միջոցառմանը մասնակցում էին Հայաստանում գործող իրավապաշտպան կազմակերպությունների, լրատվամիջոցների, միջազգային կառույցների, պաշտպանության նախարարության տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչներ:

«Քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության եւ խթանման գործում»

Ծրագրի տեւողությունը՝ 1 տարի
Բյուջե (2018 եւ 2019)՝ 39.014,50 Եվրո
Դոնոր. Նախագիծը հովանավորվում է Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության կողմից՝ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության միջոցներով:

Մաթիաս Քիսլեր,
Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան

«Նացիստական Գերմանիայից հետո մեր սերված դասերից մեկը զինված ուժերում ժողովրդավարության հաստատման անհրաժեշտությունն է եղել», – ասաց դեսպան Մաթիաս Քիսլերը՝ գոհունակություն հայտնելով առ այն, որ հատկապես Գերմանիայի Դաշնության արտաքին գործերի նախարարությունն է աջակցել այս նախաձեռնությանը: Նա նաեւ հավելեց, որ ոչ միայն քաղաքացիական հասարակության, այլ նաեւ Ազգային ժողովի վերահսկողությունն է պետք մեծացնել զինված ուժերի գործունեության նկատմամբ:

2018թ. սեպտեմբերին «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունն սկսեց իրականացնել «Քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության եւ խթանման գործում» խորագրով նախաձեռնությունը:

Նախագծի շրջանակներում ԽԵ-ն ստեղծել է մոնիթորինգի խումբ՝ կազմված հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական շարժումների և լրատվամիջոցների ներկայացուցիչներից, որոնք կմշտադիտարկեն մարդու իրավունքների ազգային ռազմավարության գործողություններին առնչվող ՀՀ ՊՆ համապատասխան գործունեությունը: Խմբի բացահայտումներն ու եզրակացությունների հիման վրա կազմված առաջարկությունների փաթեթը կներկայացվի ՊՆ պաշտոնյաներին, Ազգային ժողովի պատգամավորներին, ՀՀ քաղաքացիներին և միջազգային կառույցներին:

Նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 1-ը Ծաղկաձորի Մարիոթ հյուրանոցում կայացավ «Քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության եւ խթանման գործում» նախաձեռնության շրջանակներում ձեւավորված



մշտադիտարկման խմբի առաջին աշխատանքային հանդիպումը, որին ներկա էր եւ մասնակիցներին իր ողջույնի խոսքն ուղղեց Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Մաթիաս Քիսլերը: Դեսպանը խոստացավ, որ յուրաքանչյուր առիթով կներկայացի խմբի աշխատանքները պաշտպանության նախարարության պաշտոնյաների հետ իր հանդիպումների ժամանակ՝ նպաստելու համար խմբի եւ պաշտպանության նախարարության միջեւ փոխհամագործակցության ձեւավորմանը:

Աշխատանքային հանդիպման ընթացքում տեղի ունեցավ քննարկում ՀՀ ՊՆ տարբեր ստորաբաժանումների պատասխանատուների հետ, որոնք ներկայացրեցին ՄԻՊ 2017-19թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում իրենց ստորաբաժանումների կողմից կատարված գործողությունները եւ դրանց արդյունքում ընդունված իրավական ակտերը: Մշտադիտարկման խումբն իր հերթին ներկայացրեց խմբի կողմից իրականացված վերլուծության արդյունքում մշակված առաջարկությունները ՀՈՒ մասով 2017-2019 թվականների ազգային ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի վերանայման ուղղությամբ: Խմբի նախնական առաջարկությունների փաթեթի հետ կարելի է ծանոթանալ ԽԵ www.peacedialogue.am կայքում:

2019թ.-ի հունվար-փետրվար ամիսներին նախատեսվում է հրապարակել ՊՆ-ի կողմից 2017-18թթ. ՄԻՊ շրջանակներում իրականացված գործողությունների եւ դրանց արդյունավետության վերաբերյալ մոնիթորինգի խմբի նախնական զեկույցը: Խմբի վերջնական հաշվետվությունը նախատեսվում է հրապարակել 2019թ.-ի հոկտեմբեր ամսին:

Այս նախագծի կարեւորագույն բաղադրիչներից է նաեւ իրավական աջակցության ցուցաբերումը այն քաղաքացիներին, որոնց իրավունքները խախտվել են զինվորական ծառայության զորակոչվելու կամ զինված ուժերում ծառայության ընթացքում: 2018թ.-ի դրությամբ, ծրագրի շրջանակներում կազմակերպությունն իրավական աջակցություն է ցուցաբերել 12 քաղաքացիների, որոնցից 5-ի գործով դատարան դիմելու համար նյութեր են նախապատրաստվել: Ծրագրի շրջանակներում 2018-ին նախաձեռնվել է նաեւ ռազմավարական դատավարություն ռազմաուսումնական հաստատություններ ավարտած 2 զինծառայողների հետուսումնական պայմանագրային զինծառայությունից հրաժարվելու գործերով:

Աջակցություն ոչ մարտական պայմաններում մահացած զինծառայողների ընտանիքներին

Ծրագրի տեւողությունը՝ 2 տարի
Բյուջե (2017 եւ 2018)՝ 2.000.000,00 Դրամ
Դոնոր. Ծրագիրն իրականացվում է կազմակերպության սեփական միջոցներով

Մարդու իրավունքների հիմնախնդիրը զինված ուժերում մնում է տարբեր երկրների իրավապաշտպաններին մշտապես անհանգստացնող հարցերից մեկը: Հայկական զինված ուժերում եւս մարդու իրավունքների հետ կապված իրավիճակը մտահոգություն է առաջացնում Հայաստանի ակտիվ քաղաքացիական խմբերի, մի շարք հեղինակավոր միջազգային կազմակերպությունների մոտ. իրենց հաշվետվություններում տարբեր անկախ կազմակերպություններ նշում են զինծառայողների շրջանում մահացության բարձր մակարդակի մասին, անհանգստություն են հայտնում պարբերական իրավախախտումների, բռնության դեպքերի, քննչական մարմինների եւ զինվորական պատասխանատու կառույցների անգործության վերաբերյալ:

Ըստ «Անի» կենտրոնի տվյալների, մասնավորապես, 1994թ.-ից ի վեր Հայաստանն ու Արցախն ունեցել են ավելի քան 3 հազար 500 զոհ՝ մարտական եւ ոչ մարտական: Ղարաբաղյան պատերազմում եւ 1994 թվականին կնքված զինադադարի պայմանագրից հետո հայկական կողմն ունեցել է ավելի քան 9 հազար 700 զոհ:

Վերջին տարիների ընթացքում բանակում կատարված սպանությունների, ինքնասպանությունների դեպքերը հասարակության լայն շրջանների ուշադրության ներքո են: Դրանք, սակայն, շարունակական բնույթ են կրում, իսկ նման արտակարգ պատահարների պատճառ հանդիսացող արատավոր երեւույթները խորանում՝ դրանց դեմ համակարգված կանխարգելիչ միջոցառումների բացակայության պատճառով:

Ոլորտում դրական փոփոխությունների հասնելու համար ԽԵ-ն դեռեւս 2013թ.-ից սկսեց «Ապահով զինվորներ՝ անվտանգ Հայաստանին» նախաձեռնությունը, որի նպատակն էր վերհանել մարդու իրավունքների խախտման դեպքերը ԶՈՒ-ում, բարձրացնել ոչ միայն Հայաստանի, այլ նաեւ այն պաշտպանող զինվորների անվտանգությունը: Նախաձեռնության նպատակներից էր նաեւ բարձրացնել հասարակության տեղեկացվածությունը մարդու իրավունքների բնագավառում ԶՈՒ-ում տիրող մտահոգիչ իրավիճակի վերաբերյալ՝ խնդրի լուծման ուղղությամբ հասարակական պահանջարկ ձեւավորելու նպատակով, մոբիլիզացնել եւ ներգրավել տեղական, ազգային եւ միջազգային դերակատարների, որոնք կարող են դրական ազդեցություն ունենալ իրավիճակի վրա:

2017 եւ 2018 թթ.-ի ընթացքում եւս կազմակերպությունը չի դադարեցրել ոչ մարտական պայմաններում զոհված զինվորների ընտանիքներին նախաքննական եւ դատաքննական փուլերում տրամադրվող փորձագիտական եւ իրավաբանական աջակցությունը:

Վերջին երկու տարիներ ընթացքում կազմակերպությունն աջակցել է զինված ուժերում ոչ մարտական պայմաններում զոհված յոթ զինծառայողների հարազատներին: Հարկ է նշել, որ 2018 թ.-ից ԽԵ-ն անդամակցում է ՀՀ Քննչական կոմիտեի նախաձեռնությամբ

«Հսկայական ազգանվեր գործ եք անում,որի համար շնորհակալություն եմ հայտնում Ձեզ, կեցցե՛ք»

Գայանե Ասլիբեկյան օգտատերի գրառումը «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության ֆեյսբուքյան էջում:



ստեղծված «Զինվորական ծառայության ընթացքում մահվան դեպքերի առթիվ հարուցված առանձին քրեական գործերով նախաքննության բացթողումները վերհանելու և դրանցով պատշաճ քննությանը նպաստելու նպատակով հասարակական մոնիթորինգի աշխատանքային խմբին», որի աշխատանքները կսկսվեն 2019թ. փետրվարին:

Նախաձեռնության շրջանակներում մշտական աշխատանքներ են կատարվում նաեւ Safesoldiers.am կայքէջի բազաների թարմացման ուղղությամբ, որում հավաքագրվում են տվյալներ զինադադարի կնքման պահից հետո ՀՀ ԶՈՒ-ում գրանցված մահվան ելքով դեպքերից յուրաքանչյուրի, ինչպես նաեւ բանակում մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ:
Այս պահի դրությամբ, կազմակերպության աշխատակազմի կողմից իրականացվող մշտադիտարկման, անհատներից եւ կազմակերպություններից ձեռք բերված տվյալների հիման վրա հաջողվել է կայքէջի մահվան ելքով միջադեպերի բազա մուտքագրել 1994թ.-ից հետո ՀՀ զինված ուժերում զինվորների մահացության 1083 դեպք, որից 313-ն արձանագրվել է հրադադարի ռեժիմի խախտման արդյունքում, 226-ն սպանություն է, 213-ը՝ դժբախտ պատահարների, 116-ը՝ ինքնասպանության, 95-ը՝ առողջական խնդիրների, 41-ը՝ անվտանգության կանոնների խախտման, 15-ն՝ անփութության արդյունք է: Կայքում գրանցված 64 դեպքի պատճառներն անհայտ են կամ կազմակերպությանը դրանք պարզել դեռեւս չի հաջողվել:

«Արենա. համայնքային թատրոն եւ հանրային արվեստ»

Բյուջե (2017 եւ 2018)՝ 316.477,06 Եվրո
Դոնոր. «ԱՐԵՆԱ. համայնքային թատրոն եւ հանրային արվեստ» ծրագիրն իրականացվել է Գերմանիայի դաշնության արտաքին մշակութային կապերի ինստիտուտի (ifa) “zivik” ծրագրի աջակցությամբ՝ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության միջոցներով:
Ծրագրի գործընկեր՝ OWEN Mobile Akademie für Geschlechterdemokratie und Friedensförderung e.V.

Աննա Անդրեեւա,
«Արենա» ամառային դպրոցի մասնակից, ՌԴ

«Հեռուստացույցով անընդհատ խոսում են հակամարտությունների մասին և այնքան շատ, որ ակամա մոռանում ես, որ խոսքը մարդկանց մասին է: Այս ամառային դպրոցում հանդիպելով միմյանց հետ հակամարտություններ ունեցող տարբեր երկրների ներկայացուցիչների, ընկերանալով նրանց հետ, հակամարտությունն, այսպես ասած, «մարդկայնացրի» ինքս ինձ համար: Ես հասկացա, թե ինչքան վատ է դա այնտեղ ապրող մարդկանց համար», – ասում է Արենայի ամառային դպրոցի մասնակից, ռուսաստանցի Աննա Անդրեեւան:

«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունն իր գերմանական գործընկեր ՕՎԵՆ-ի հետ համատեղ, 2015-2018թթ. իրականացրեց «ԱՐԵՆԱ. Համայնքային թատրոն եւ հանրային արվեստ» անվանումը կրող ծրագիրը: Այն ուղղված էր հակամարտություններում ներգրավված նախկին խորհրդային երկրներում տարածաշրջանային եւ համայնքային մակարդակներում խաղաղասիրական նախաձեռնությունների ազդեցության բարելավմանը: ԱՐԵՆԱ-ի աշխարհագրությունն ընդգրկում էր նախկին խորհրդային երկրներից ՌԴ-ն (Չեչնիայի հանրապետություն, Սանկտ Պետերբուրգ, Ռոստովի շրջան), Ուկրաինան, Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը:

Ծրագիրն ի սկզբանե նախատեսված էր երեք տարվա համար, սակայն, ունեցած հաջողությունը հաշվի առնելով, որոշում կայացվեց շարունակել այն նաեւ 2018-ին: Ծրագրի իրականացման 4 տարվա ընթացքում կազմակերպված գործողությունների աշխարհագրությունն ընդգրկեց Վրաստանը, ՌԴ-ն, Ադրբեջանը, Հայաստանը, Ուկրաինան, Ավստրիան, Գերմանիան, Լիբանանը, Նիդեռլանդները, Իտալիան, Խորվաթիան: Ծրագրում ներգրավվեցին վերոհիշյալ երկրների հարյուրավոր ներկայացուցիչներ՝ ակտիվիստներ, փորձագետներ, արվեստագետներ, քաղհասարակությունների ներկայացուցիչներ, իսկ նրանց կողմից ծրագրի շրջանակներում կամ դրա ազդեցությամբ կազմակերպված

տեղական նախաձեռնություններում ներգրավված մասնակիցների թիվն անցնում է տաս հազարից: Ծրագրի իրականացման ընթացքում բարի ավանդույթ դարձավ ամենամյա ամառային դպրոցների կազմակերպումը: «ԱՐԵՆԱ» խաղաղասիրության եւ արվեստի ամառային դպրոց խորագիրը կրող միջոցառումները հնարավորություն տվեցին հակամարտություններից տուժած հասարակությունների ներկայացուցիչներին ոչ միայն գիտելիքներ ձեռք բերել հակամարտությունների խաղաղ կարգավորման տեսությունների մասին, այլ նաեւ համատեղ ջանքերով ստեղծել գեղարվեստական բազմաթիվ աշխատանքներ, որոնք բարձրաձայնում են տարածաշրջանում տեղի ունեցող ռազմականացման, քարոզչության, անարդարության եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների նկատմամբ ճնշումներին առնչվող խնդիրները: 2017թ.-ին ամառային դպրոցը կայացավ «Խաղաղության եւ հակամարտությունների լուծման» ավստրիական ուսումնասիրությունների կենտրոնում (ASPR)՝ ավստրիական Շտադտշլայնինգում, 2018-ին՝ Վրաստանի Բորժոմի քաղաքում:

Հարկ է նշել, որ 2017թ.-ին ծրագիրը նպատակ է հետապնդել հզորացնել ներգրավված քաղաքացիական խմբերը, որպեսզի նրանք կարողանան իրենց աշխատանքը շարունակելու համար անհրաժեշտ ռազմավարություններ եւ աշխատանքային գործիքներ մշակել, իսկ 2018 թ.-ին ծրագրի անձնակազմն աջակցել է մասնակիցներին իրենց կողմից մշակված ռազմավարությունների իրականացման գործում:

Ընդհանուր առմամբ՝ 2017-2018թթ.-ին Արենայի շրջանակներում իրականացվել է 6 տարածաշրջանային դասընթաց եւ 2 ամառային դպրոց, որոնց մասնակից է դարձել շուրջ 200 մարդ: Բացի այդ, շուրջ 2500 մարդ ներգրավված են եղել ծրագրի մասնակիցների կողմից իրենց բնակավայրերում իրականացված միջոցառումներին, ցուցադրություններին եւ դասընթացներին:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում ստեղծվել են բազմաթիվ ստեղծագործական աշխատանքներ՝ վավերագրական եւ անիմացիոն ֆիլմեր, կոմիքսներ եւ գրաֆիկական աշխատանքներ, որոնք մասնակցել եւ հաղթող են ճանաչվել մի շարք տարածաշրջանային եւ միջազգային փառատոններում, ներկայացվել տարբեր ցուցահանդեսներում:
Իսկ 2017թ.-ին ծրագրի արդյունքների հիման վրա լույս տեսավ «Ստեղծագործական խաղաղասիրություն» խորագիրը կրող մեթոդաբանական ձեռնարկը, որում ամփոփված է ԱՐԵՆԱ-ի մասնակիցների՝ խաղաղասիրական գործունեության մեջ արվեստի միջոցների կիրառման փորձը:

«ԱՐԵՆԱ. Համայնքային թատրոն եւ հանրային արվեստ» ծրագրի հետ կապված մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել ԽԵ-ի www.peacedialogue.am կայքում, «Ինչ է «Արենա» նախագիծը» բաժնում:

«Վերանայել, համագործակցել, կիսվել»

Ծրագրի տեւողությունը՝ 3 տարի
Բյուջե՝ Ծրագրի բյուջեն չի գտնվել «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության տնօրինության ներքո
Ծրագրի գործընկերներ. OFAJ (Ֆրանսիա), Une terre culturelle ասոցացիա (Ֆրանսիա), Centre Français de Berlin (Գերմանիա), AFS Istanbul (Թուրքիա)
Դոնոր. Ծրագիրն իրականացվում է Erasmus + -ի եւ Ֆրանս-գերմանական երիտասարդական գրասենյակի աջակցությամբ:

Չորս երկրների՝ Գերմանիա, Ֆրանսիա, Թուրքիա եւ Հայաստան, միջեւ փոխանակման այս ծրագիրն սկիզբ է առել 2017 թվականի նոյեմբերին՝ Մարսել քաղաքում: Վերը նշված երկրներից 18-25 տարեկան 24 երիտասարդ արդեն մի քանի անգամ հանդիպել են միմյանց ծրագրում ընդգրկված երկրներում՝ ձգտելով վերանայել սեփական հայացքները պատմության եւ այլոց վերաբերյալ, համագործակցել եւ ստեղծել միասնական ապագա: 2018թ.-ին երիտասարդները Մարսելում հանդիպումից հետո, հանդիպեցին Հայաստանում, որտեղ նրանք հյուրընկալվեցին ԽԵ-ի կողմից:

Հաջորդ հերթական հանդիպումը տեղի ունեցավ Բեռլինում: 2019թ.-ի գարնանը ծրագրի մասնակիցները կհանդիպեն արդեն Ստամբուլում:

«Մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ հասարակությունները գնալով պարփակվում են, ազգայնական գաղափարներն՝ էլ ավելի լսելի դառնում: Ուրեմն, կարևոր է, որ այս չորս երկրներից ժամանած ուսանողներն ու երիտասարդները հանդիպեն այս վտանգավոր իրավիճակը շտկելու համար, ուղղորդեն իրենց երկրների երիտասարդներին՝ վերափոխվելու և կիսվելու,» –ասում է ծրագրի ֆրանսիացի մասնակից Դավիդ Դիանկուրտը:

EPNK-3

Ծրագրի տեւողություն՝ 3 տարի
Ընդհանուր բյուջե (2017 եւ 2018)՝ 14.500,00 Եվրո
Դոնոր՝ Եվրոպական միություն
Ծրագրի գործընկեր՝ Ճգնաժամերի կառավարման նախաձեռնություն (CMI), Ֆինլանդիա

EPNK-3 ծրագրի նպատակն է վիճարկել Լեռնային Ղարաբաղի հակամարտության հաղթահարման փակուղի մտած գործընթացը՝ հայացք ուղղելով երիտասարդ սերնդին, ովքեր մեծացել են մեկուսացման մեջ, ներկայացնում են հակամարտությունից ամենաշատը տուժած խմբերից մեկը: Ծրագիրը մեկնարկել է դեռեւս 2010 թվականին, եւ ծրագրի տարբեր փուլերում ԽԵ-ն ներգրավված է եղել որպես ծրագրի տեղական գործընկեր: Վերջին երկու տարիների ընթացքում ԽԵ աշխատակիցները ներգրավված են եղել հիմնականում որպես փորձագետներ եւ խորհրդատուներ ծրագրի հայ եւ ադրբեջանցի երտասարդ մասնակիցների կողմից իրականացվող նախաձեռնություններին աջակցելու նպատակով: Ծրագրին մասնակցող երիտասարդների նախաձեռնությունները բազմազան են՝ անիմացիոն, փաստագրական ֆիլմեր, դասընթացներ, հետազոտություններ եւ վերլուծություններ, որոնք հիմնականում ուղղված են խաղաղասիրական գործընթացներում ավելի լայն շրջանակների ներգրավմանը:

Ֆինանսական հաշվետվություն
2017 եւ 2018 թթ.-ի համար



«ԽԵ» ֆինանսական վիճակը
2017թ.-ի կտրվածքով

N	Եկամուտներ եւ փաստացի ծախսեր (եվրո)	Ընդհանուր եկամուտներ	Փաստացի ծախսեր	Ընդհանուր բալանս
1	Հոնորարներ եւ աշխատավարձներ*	35,066.05 €	31,287.96 €	3,778.10 €
2	Դասընթացների կազմակերպման ծախսեր	35,042.15 €	34,713.99 €	328.16 €
3	Դասընթացների իրականացման վայրի վարձակալություն	52,103.11 €	54,863.94 €	-2,760.83 €
4	Տրանսպորտային/ճամփորդական ծախսեր	27,531.39 €	24,102.32 €	3,429.07 €
5	Սնունդ	325.50 €	376.19 €	-50.69 €
6	Տպագրական ծախսեր, գրավոր եւ բանավոր թարգմանություններ	7,390.00 €	7,708.94 €	-318.94 €
7	Գնահատում	3,712.50 €	3,724.63 €	-12.13 €
8	Այլ ծախսեր	6,271.00 €	6,246.60 €	24.40 €
9	Ադմինիստրատիվ ծախսեր	3,200.53 €	3,269.96 €	-69.43 €
10	Սարքավորումներ	1,088.25 €	786.25 €	302.00 €
11	Ուսումնասիրություններ, հետազոտություններ	5,452.00 €	0.00 €	5,452.00 €
12	Փորձագետներ, խորհրդատուներ	5,452.00 €	0.00 €	5,452.00 €
	Ընդհանուր	**182,634.48 €**	**167,080.79 €**	**15,553.70 €**



«ԽԵ» ֆինանսական վիճակը
2018թ.-ի կտրվածքով

N	Եկամուտներ եւ փաստացի ծախսեր (եվրո)	Ընդհանուր եկամուտներ	Փաստացի ծախսեր	Ընդհանուր բալանս
1	Հոնորարներ եւ աշխատավարձներ*	34,145.03 €	37,979.75 €	-3,834.72 €
2	Դասընթացների կազմակերպման ծախսեր	41,201.77 €	40,593.75 €	608.02 €
3	Դասընթացների իրականացման վայրի վարձակալություն	47,066.07 €	47,315.51 €	-249.44 €
4	Տրանսպորտային/ճամփորդական ծախսեր	30,336.12 €	30,909.61 €	-573.48 €
5	Սնունդ	1,141.20 €	1,982.35 €	-841.15 €
6	Տպագրական ծախսեր, գրավոր եւ բանավոր թարգմանություններ	9,933.56 €	9,453.09 €	480.47 €
7	Գնահատում	4,320.00 €	4,345.38 €	-25.38 €
8	Այլ ծախսեր	5,992.60 €	6,278.20 €	-285.60 €
9	Ադմինիստրատիվ ծախսեր	3,295.47 €	3,215.84 €	79.63 €
10	Սարքավորումներ	270.54 €	595.54 €	-325.00 €
11	Ուսումնասիրություններ, հետազոտություններ	0.00 €	5,313.94 €	-5,313.94 €
12	Փորձագետներ, խորհրդատուներ	1,302.00 €	6,727.61 €	-5,425.61 €
	Ընդհանուր	**179,004.36 €**	**194,710.56 €**	**-15,706.20 €**



* «Հոնորարներ եւ աշխատավարձներ» բյուջետային տողը ներառում է նաեւ ծրագրերի միջազգային աշխատակազմին եւ արտասահմանից հրավիրված դասընթացավարներին վճարումները:

Հետագա անելիքները
2019-2021

2021
2020
2019
2018
2017
2016
2015
2014
2013
2012
2011
2010
2009



Ռազմավարական նպատակներ՝ 2019-2021 թթ.-ի համար

2018-2021թթ. «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության անձնակազմն առանձնահատուկ ուշադրություն է հատկացնելու համայնքային ուղղվածությանը:

Հաջորդ երեք տարվա համար ԽԵ գործունեության հիմնական ոլորտային թեմաները կլինեն՝

- Մարդու իրավունքները և ժողովրդավարությունը
- Խաղաղության մշակույթի ձևավորումն ու հակամարտությունների փոխակերպումը
- Համայնքի հզորացումը, համայնքի բնակիչների կարողությունների զարգացումն ու համայնքի ներգրավումը

Հաջորդ երեք տարիների ընթացքում կազմակերպությունը նախատեսում է իրականացնել գործողություններ հետեւյալ ուղղություններով.

- «Քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման գործում»
- «ՀՀ ԶՈՒ-ում գրանցված միջադեպերի արդյունքում, քրեական վարույթների շրջանակներում որպես կասկածյալ եւ վկա ՌՈ բերված անձանց խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովումը»
- Ոչ մարտական պայմաններում զոհված զինծառայողների մասին պատմող վավերագրական ֆիլմի նկարահանում
- Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների (ՔՀԿ, լրատվամիջոցներ) կարողությունների զարգացում ԶՈՒ գործունեության նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն սահմանելու նպատակով
- Իրավական աջակցության ցուցաբերում եւ ԶՈՒ-ում ծառայության ընթացքում մարդու իրավունքների ոտնահարման հետեւանքով տուժած քաղաքացիների շահերի պաշտպանություն դատարանում
- «Ղարաբաղյան պատերազմի ընթացքում անհայտ կորածների վերաբերյալ արխիվի ստեղծում»
- «Խաղաղության գրադարանի» ստեղծում
- Վանաձոր համայնքի երիտասարդների կարողությունների զարգացում մեդիագրագիտության ուղղությամբ
- Խաղաղության, գենդերի, մարդու իրավունքների եւ ժողովրդավարության թեմաներով քննարկումների կազմակերպում

Նախատեսվող գործունեության իրականացման համար ԽԵ-ն նախատեսում է կիրառել հետեւյալ մեթոդաբանություններն ու մոտեցումները.

- Մարդու իրավունքների մշտադիտարկում
- Իրավական խորհրդատվության տրամադրում
- Մեդիա աշխատանք
- Փորձի փոխանակում
- Կարողությունների զարգացում՝ ֆորմալ եւ ոչ ֆորմալ կրթության ոլորտներում
- Քաղաքականության ու հայեցակարգերի մշակում եւ տարածում
- Լոբբինգ
- Պետական մարմինների հետ համագործակցություն
- Ցանցերի ստեղծում (նեթվորքինգ)

© 2019 Հաշվետվությունը հրապարակվել է «Խաղաղության
երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից